ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ԱԺՔԱՐՈՒՅԺՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 43 - 44 (16540) ՇԱԲԱԹ, 3 ՀՈՒՆԻՍԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

ՆԱՏՕ-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Թբիլիսիի խորհրդարանի շենքում անցկացվեց ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի գարնանային նստաշրջանը: Նշենք, որ Վրաստանը թվով հինգերորդ երկիրն էր, որը, չհանդիսանալով ալյանսի անդամ, իր տարածքում անցկացրեց նման միջոցառում:

Հունիսի 29-ին, ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովի լիագումար նիստում, ելույթ ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն: Ելույթ ունեցողնե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԼԵՀԱՍՏԱՆ

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱՏԵՂ ՀՈՒՇԱԳԻՐ



Մայիսի 30-ին, երկօրյա պաշտոնական այցով, Վրաստանում էր գտնվում Լեհաստանի նախագահ Անջեյ Դուդան: Այցի շրջանակներում, Լեհաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեի հետ: Այցի ավարտին, Լեհաստանի նախագահը մեկնեց Բաթումի:

Կայացած հանդիպումներում կողմերը առանձնակի ուշադրություն հատկացրին վրաց-լեհական հարաբերությունների զարգացման հարցին: Ընդգծվեց տարբեր ոլորտներում համագործակցության դինամիկ զարգացումը, փոխներդրումների հարցում գրանցված առաջընթացը: Նշվեց համատեղ բիզնես-գագաթաժողովի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՆՇՎԵՑ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Է ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՎԵԼ ՄԵՐՁԵՑՆԵԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ»

Մայիսի 31-ին Վրաստանը նշեց Ոստիկանության օրը:

Մասնագիտական տոնի առթիվ, Վրաստանի ՆԳ նախարարության հիմնական նստավայրում, անցկացվեց հատուկ միջոցառում, որին ներկա էին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, երկրի օրենսդիր եւ գործադիր իշխանությունների, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, հյուրեր՝ Ուկ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԱՐԴԱՏՈՆ - 2017

ԹԲԻԼԻՍԻՆ 103-ՐԴ ԱՆԳԱՄ ՄԵԾԱՐԵՑ ՍԻՐՈ ԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԳՉԻՆ

Մայիսի 28-ի առավոտյան, Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցում, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը մատուցեց Սուրբ պատարագ՝ նվիրված երկրորդ Ծաղկազարդին, Հայաստանի տոնին եւ Թբիլիսիի Վարդատոնին: Ապա եկեղեցու բակում հանգչող Սայաթ-Նովայի շիրմին վարդեր խոնարհվեցին:

Մայիսի 28-ին՝ ամսվա վերջին կիրակի օրը, երբ 1914թ.-ից ի վեր ավանդաբար նշվում է բանաստեղծներ Հովհաննես Թումանյանի, Իոսեբ Գրիշաշվիլու, գեղանկարիչ Գեւորգ Բաշինջաղյանի հիմնադրած Վարդատոնը, քաղաքի «Մեյդան» թաղամասի այսօր՝ Վախթանգ Գորգասալու անվան հրապարակը ծափահարություններով դիմավորեց Երեւանից, Բաթումիից, Ախալքալաքիից, Նինոծմինդայից, Ախալցիխեից, Բոլնիսիից, Մառնեուլիից եւ այլ վայրերից ժամանած հյուրերին: Հրապարակում ասեղ գցելու տեղ չկար, Վարդատոնը միավորել էր

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 28-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ՆՇՎԵՑ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՄԱՆ 99-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Մայիսի 28-ին Հայաստանը եւ համայն հայությունը նշեց Հայաստանի Առաջին հանրապետության հիմնման 99-րդ տարեդարձը:

Այդ օրը Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի, երկրի բարձրագույն ղեկավարության եւ հուշահամալիր այցելած հյուրերի հետ մասնակցեց Հանրապետության տոնին նվիրված տոնակատարությանը: Սերժ Սարգսյանը ծաղկեպսակ դրեց Սարդարապատի ճակատամարտի հերոսների հիշատակը հավերժացնող հուշակոթողին եւ հարգանքի տուրք մատուցեց: Զորահանդեսի մասնակիցներին ողջունելուց եւ Պատվո նվագախմբի հանդիսավոր քայլերթն ընդունելուց հետո, Հայաստանի նախագահը միջոցառման մասնակիցների հետ միասին, Սարդարապատի հուշահամալիրի Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանում, դիտեց «Գալէմքարեաններ պղնձագործ վարպետաց սիրիահայոց դպրոց. փրկված եւ Հայրենիքին նվիրաբերված մշակութային արժեքներ» խորագրով ցուցահանդեսը:

ՄԱՅԻՍԻ 26-Ը՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԺ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ

Մայիսի 26-ին Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանը, Երեւանի «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում, մասնակցեց Վրաստանի անկախության 99-րդ ամյակին նվիրված միջոցառմանը, որտեղ հանդես է եկել ելույթով:

Շնորհավորելով Վրաստանի ազգային տոնի՝ Անկախության օրվա կապակցությամբ, նա մասնավորապես նշեց.

- Հայ-վրացական բազմադարյա հարաբերությունները պատմության ընթացքում ձեւավորվել եւ զարգացել են՝ հիմնված լինելով բարիդրացիության եւ փոխվստահության ամուր հիմքերի վրա: Վերջին շրջանում, Հայաստանի եւ Վրաստանի ղեկավարների պարբերական փոխայցելությունը-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ՄԵԼԱՆՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԱՐՏԻՍՏ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի ընթացիկ տարվա մայիսի 24-ի հրամանագրով, Հանրապետության տոնի առթիվ, թատերարվեստի բնագավառում ունեցած վաստակի համար՝ Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի դերասանուհի Մելանյա ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ շնորհվել է Հայաստանի վաստակավոր արտիստի պատվավոր կոչում:

«Վրաստան» թերթի աշխատակազմը ի սրտե շնորհավորում է Մելանյա Բարսեղյանին պատվավոր ու արժանի կոչման համար, մաղթում երկարակեցություն, երջանկություն եւ ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

ՆԱՏՕ-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րի թվում էին նաեւ հատուկ հրավիրված հյուրերը՝ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ռոուզ Գետեմյուլլերը եւ Ուկրաինայի Գերագույն ռադայի նախագահ Անդրեյ Պարուբին:

Վեհաժողովում զեկուցումներով վրացական կողմից ելույթ ունեցան պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Վլադիմիր Չիչիբաիան, ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեն, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի նախագահ Աննա Նացվլիշվիլին, փորձագետ Կախա Գոգոլաշվիլին եւ նախկին ԱԳ նախարար Իրակլի Մենաղարիշվիլին:

Վեհաժողովի աշխատանքի արդյունքում ընդունվեց «Վրաստանի եվրատլանտյան ինտեգրման աջակցության մասին» հուշագիրը: Հուշագրում ալյանսը բարձր է գնահատել եվրատլանտյան անվտանգության ապահովման, ինչպես նաեւ Աֆղանստանում առաքելության գործում Վրաստանի ավանդը, ողջունում է Վրաստանում ընթացիկ քաղաքական բարեփոխումները եւ Վրաստան-ՆԱՏՕ հանձնաժողովի շրջանակներում գործնական համագործակցությունը:

Վեհաժողովի աշխատանքի շրջանակներում, Վրաստանի ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեի եւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ռոուզ Գետեմյուլլերի կողմից ստորագրվեց Վրաստանի եւ ՆԱՏՕ-ի միջեւ համագործակցության խորացման համաձայնագիր ՆԱՏՕ-ի կարգավիճակի եւ ՆԱՏՕ-ի անձնակազմի վերաբերյալ:

ՎՐԱՍՏԱՆ - ԼԵՀԱՍՏԱՆ

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱՏԵՂ ՀՈՒՇԱԳԻՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

անցկացման անհրաժեշտությունը: Կողմերը անդրադարձան նաեւ Վրաստանի եվրոպական եւ եվրաատլանտյան կառույցներին ինտեգրման հետ առնչվող հարցերին:

Վրաստանի նախագահի հետ անցկացված համատեղ մամլո ասուլիսում, Լեհաստանի նախագահը, անդրադառնալով քննարկված հարցերին, մասնավորապես, հայտարարեց.

- Ես համաձայն եմ ՆԱՏՕ-ի այն հայտարարություններին, որ նրա դռները միշտ բաց են: ՆԱՏՕ-ն ագրեսիվ դաշինք չէ, դա հավերժ պաշտպանվող դաշինք է: Վրաստանը մշտապես գտնվում է ՆԱՏՕ-ի ուշադրության կենտրոնում, եւ նա դաշինքի կայուն գործընկերն է: Ջերմորեն պաշտպանում եմ ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցությունը:

Նրա խոսքով, ՆԱՏՕ-ին անդամակցելը «դժվարին գործընթաց է»:

- Ցանկանում եմ ընդգծել, որ Վրաստանն անպայմանորեն կդառնա դաշինքի անդամ,- ընդգծեց Լեհաստանի նախագահը:

Այցի շրջանակներում, Վրաստանի եւ Լեհաստանի նախագահները ստորագրեցին երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման 25-ամյակին նվիրված համատեղ հուշագիր: Հուշագրում կրկին անգամ ընդգծվել է Եվրամիությանն ու ՆԱՏՕ-ին ինտեգրվելու հարցում Վրաստանին աջակցություն ցուցաբերելու մասին Լեհաստանի պատրաստակամությունը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՇՏԵՑՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մայիսի 31-ին հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին հանդիպում ունեցավ Վրաստանում USAID-ի ներկայացուցչության ղեկավար Դագլաս Բոլայի հետ:

Հանդիպման գլխավոր թեման բռնազավթված տարածքներում եւ բռնազավթված գոտու երկայնքով ստեղծված իրավիճակի, տեղափոխությունների ազատության ու դիմակայության գոտում ապօրինի ձերբակալված Վրաստանի քաղաքացիներին առնչվող հարցերն էին:

Քեթեւան Ցիխելաշվիլին USAID-ի առաքելության ղեկավարին ներկայացրեց Վրաստանի կառավարության խաղաղասիրական քաղաքականության առաջնահերթությունները: Ընդգծվեց USAID-ի հետ համագործակցության նշանակությունը, ինչպես հակամարտությունների կարգավորման գործընթացում, այնպես էլ քաղաքացիական ինտեգրման ոլորտում:

Պետնախարարը Դագլաս Բոլային շնորհակալություն հայտնեց խաղաղարարական գործընթացում եւ իրականացվող նախագծերի ֆինանսավորման հարցում USAID-ի ներգրավման կապակցությամբ: Կողմերը քննարկեցին նաեւ ապագա համագործակցության հետ առնչվող հարցեր:

ՆՇՎԵՑ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Է ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՎԵԼ ՄԵՐՁԵՑՆԵԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ռաինայից եւ Լատվիայից:

Միջոցառմանը զեկուցումով հանդես եկավ Վրաստանի ներքին գործերի նախարար Գիորգի Մղեբրիշվիլին:

Հավաքվածներին տոնի առթիվ շնորհավորեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին: Նա իր խոսքում նշեց, որ երկրի իշխանությունների նպատակն է ոստիկանությանը եւ հասարակայնությանը դարձնել դաշնակիցներ ու գործընկերներ: Նա ոստիկանության աշխատակիցներին շնորհակալություն հայտնեց այն ներդրման համար, որ նրանք կատարեցին Եվրամիության հետ Վրաստանի անայցեգրային պայմանակարգի հաստատման գործում:

- Եթե չլինեին երկրի անվտանգությունն ու ոստիկանության միջազգային համագործակցությունը, նման արդյունքի հասնել հնարավոր չէր: Այս տարի Վրաստանը եւ եվրոպոլը ձեւակերպեցին ռազմավարական եւ օպերատիվ համագործակցության համաձայնագիր: Դա նշանակում է, որ մենք դարձանք Եվրամիության բաղկացուցիչ մասը դրա իրավապահպան ոլորտում, եւ դա նշանակալից քայլ է եվրահնտեգրման ճանապարհին,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Վարչապետը հարգանքի տուրք մատուցեց այն ոստիկաններին, ովքեր զոհվել են իրենց ծառայական պարտականությունների կատարման ժամանակ:

ՄԱՅԻՍԻ 26-Ը՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԺ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ները եւ տարբեր ոլորտներում համագործակցության խորացումը վկայում են մեր երկրների միջեւ ձեւավորված հարաբերությունների բարձր մակարդակի մասին:

Հայաստանի Աժ նախագահը կարեւորեց նաեւ վերջին տարիներին հայ-վրացական միջխորհրդարանական հարաբերությունների ակտիվությունը համագործակցության ոլորտում.

2017թ. հատկանշական տարի է երկկողմ փոխհարաբերություններում. նշվում է Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակը:

Խորհրդարանի նախագահը համոզմունք հայտնեց, որ, միացյալ ջանքերի շնորհիվ, կկարողանանք առավել խթանել հայ-վրացական բարեկամական հարաբերությունների զարգացման դրական դինամիկան՝ նոր մակարդակի բարձրացնելով փոխհարաբերությունները:

Արա Բաբլոյանը վստահություն հայտնեց, որ Վրաստանը կշարունակի իր զարգացման վերընթաց ուղին՝ բազում ձեռքբերումներով:

Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն շնորհակալություն հայտնեց այցելության եւ Վրաստանի Անկախության օրը միասին նշելու համար: Դեսպանը նշեց նաեւ, որ նշանակալից է Վրաստանում ապրող հայերի լուման իրենց պետության կառուցման եւ զարգացման գործում:



ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՁՈՀԵՐ՝ ՄՈԼԵԳՆԱԾ ՓՈԹՈՐԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Մայիսի 29-ի ցերեկը Մոսկվայում եւ Մոսկվայի մարզում մոլեգնած սաստիկ փոթորիկը 14 մարդու կյանք է խլել, տուժել է գրեթե 170 մարդ: Նրանցից 146-ը հոսպիտալացվել էին, 108 մարդ, դրանց թվում՝ 22 երեխա, մնում են հիվանդանոցներում:

Մոսկվայում փոթորիկը տապալել է 3,5 հազար ծառ: Վնասվել են 140 բազմահարկ բնակելի շենքերի ու վարչական շենքերի տանիքներ, վնասվածքներ են ստացել 1500-ից ավելի ավտոմեքենաներ: Փոթորկի հետեւանքները վերացնում են քաղաքային ծառայությունների 35 հազար աշխատակիցներ, ինչպես նաեւ ավելի քան 4,5 հազար միավոր տեխնիկա:

ԱՄՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԸՆԴԼԱՅՆՎԵՆ

ԱՄՆ-ի Կոնգրեսի սենատի երկու անդամներ հանդես են եկել Ռուսաստանի դեմ սահմանված պատժամիջոցների խստացման նախաձեռնությամբ՝ Ուկրաինայի եւ Սիրիայի նկատմամբ նրա քաղաքականության, ինչպես նաեւ Միացյալ Նահանգների «կիբեռհամակարգեր ներխուժման» պատճառով: Պատժամիջոցները ուղղված կլինեն Ռուսաստանի տնտեսության ճյուղերի դեմ, ներառյալ՝ հանքարդյունահանման, մետաղագործական ճյուղերը, ինչպես նաեւ երկաթուղիները:

Փաստաթուղթը նախատեսում է կատարողական հրամանագրերում հիշատակված պատժամիջոցների կոդավորում եւ խստացում: Խոսքը վերաբերում է այն սահմանափակիչ միջոցներին, որոնք ազդում են ռուսական էներգետիկական նախագծերի եւ տնտեսության հանգուցային հատվածներում պարտքի ֆինանսավորման վրա:

ԵՄ-ՍԻՐԻԱ

ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑԻՆ ՄԵԿ ՏԱՐՈՎ

Եվրամիությունը Սիրիայի իշխանությունների դեմ սահմանված պատժամիջոցները երկարացրել է մինչեւ 2018 թվականի հունիսի 1-ը եւ պատժամիջոցների ցուցակում ներառել երեք նախարարի: Այդ մասին ասված է ԵՄ-ի խորհրդի հայտարարության մեջ:

«Խորհուրդը 2017 թվականի մայիսի 29-ին սիրիական ռեժիմի դեմ սահմանափակիչ միջոցների գործողությունը երկարացրել է մինչեւ 2018 թվականի հունիսի 1-ը»,- ասված է փաստաթղթում: Դրանում նշվում է, որ «ԵՄ-ն պատժամիջոցների ներքո հայտնված անձանց ցուցակում հավելել է Սիրիայի կառավարության երեք նախարարի»:

ՇՐԻ ԼԱՆԿԱ

ՀԵՂԵՂՄԱՆ ԶՈՀԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է 200-Ը

Շրի Լանկայում հեղեղումների հետեւանքով զոհվածների թիվը գերազանցել է 200-ը, եւս 96 մարդ անհայտ կորած է համարվում:

Հեղեղումների եւ սողանքների հետեւանքով, շուրջ 600 հազար բնակիչ հարկադրված էին լքել իրենց տները, ավերվել է ավելի քան 1,3 հազար տուն, եւս շուրջ 5 հազար շենքեր վնասվածքներ են ստացել: Շրի Լանկայի արտակարգ պատահարների արձագանքման կենտրոնի տվյալներով, միայն հեղեղումներից՝ ավելի քան 557 հազար մարդ է տուժել երկրի 15 օկրուգներում: Տարերքից տուժած բնակիչներից շատերն սկսել են վերադառնալ իրենց տները:

Շրի Լանկան արդեն դիմել է ՄԱԿ-ին ու Հարավային Ասիայի երկրներին արհավիրքի հետեւանքների վերացման նպատակով օգնություն տրամադրելու խնդրանքով:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

Գ.ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԱՎՏՈՄԱՏ ԿԵՐՊՈՎ ՉԻ ՉԵՂԱՐԿՎԻ»

Օրենքը, ըստ որի, օտար երկրի քաղաքացիություն ստացած Վրաստանի քաղաքացիությունը ավտոմատ կերպով չեղարկվում է, հնարավոր է փոխվի:

Խորհրդարանի անկախ պատգամավոր Սալոմե Զուրաբիշվիլու նախաձեռնությունը, ըստ որի, երկքաղաքացիության արգելքը պետք է վերացվի եւ քաղաքացիների համար դառնա «համատեղելի», նրա խոսքով հավանության է արժանացել սահմանադրական հանձնաժողովի կողմից:

Ինչպես վրացական սփյուռքի հետ հանդիպման գագաթաժողովում հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, ինքը լիահույս է, որ սահմանադրական փոփոխությունների շրջանակներում կընդունվի այնպիսի օրենք, ըստ որի, օտար երկրի քաղաքացիություն ստացած Վրաստանի քաղաքացիները երկրի քաղաքացիությունը վերադարձնելու համար ստիպված չեն լինի անցնել բարդ ընթացակարգեր:

- Սահմանադրական բարեփոխումների շրջանակներում, մենք քննարկում ենք նախաձեռնությունը, ըստ որի, Վրաստանի քաղաքացիները, ովքեր ստացել են օտար երկրի քաղաքացիություն, ստիպված չեն լինի անցնել այն բարդ ընթացակարգերով, որոնք անհրաժեշտ են Վրաստանի քաղաքացիության վերականգնման համար: Հուսով եմ, որ այդ որոշումը կընդունվի սահմանադրական փոփոխությունների շրջանակներում, եւ դա նշանակալիորեն կդյուրացնի մեր երկրի ներկայացուցիչների համար Վրաստանում ապրելու հնարավորությունը,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Անկախ պատգամավոր Սալոմե Զուրաբիշվիլին մինչ այդ հայտարարել էր, որ տարբերակը, որն արժանացել էր սահմանադրական կոմիտեի մեծամասնության աջակցությանը, նախատեսում է սահմանադրության 32-րդ հոդվածով օտար երկրի քաղաքացիության «համատեղման» իրավունք, եւ դրա պայմաններն ու կարգը կարգավորվելու է քաղաքացիության մասին օրգանական օրենքով:

ԿՆԵՐԴՐՎԻ ԶՈՐԱԿՈՉԻ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ

Վրաստանի պաշտպանության նախարարությունը եւ խորհրդարանն աշխատում են զորակոչի նոր կարգի ներդրման ուղղությամբ, որը, ենթադրաբար, կներդրվի արդեն այս տարի:

- Զորակոչման համակարգը նորացվելու է, եւ մինչեւ տարեվերջ կներդրվի բացարձակապես նոր համակարգ: Պաշտպանական գերատեսչությունն իր իրավասության շրջանակներում ձեռնարկել է էական քայլեր, որպեսզի ներդնի բացարձակապես նոր համակարգ: Ելնելով պետական գլոբալ մոտեցման անհրաժեշտությունից՝ մենք, որպես պետական գերատեսչություն, օրենսդիր եւ մյուս գերատեսչությունների հետ ակտիվորեն գործում ենք այդ ուղղությամբ,- հայտարարեց Վրաստանի պաշտպանության նախարար Լեւան Իզորիան:

ԵՎԳԵՆԻ ԿՈՆԻՇԵՎԸ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՐԻ ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը Վրաստանում Շվեյցարիայի դեսպանությանն առընթեր Ռուսաստանի շահերի բաժնի ղեկավար է նշանակել Եվգենի Կոնիշեւին:

62-ամյա Եվգենի Կոնիշեւը 1992 թվականից աշխատում է դիվանագիտության ոլորտում: Մինչեւ նոր նշանակումը, Եվգենի Կոնիշեւը 2013 թվականից զբաղեցնում էր Հայաստանի Գյումրի քաղաքում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսի պաշտոնը:

Եվգենի Կոնիշեւը ունի երկրորդ կարգի արտակարգ եւ լիազոր դեսպանորդի աստիճան, տիրապետում է ֆրանսերենին եւ ռումիներենին:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(2 Հունիսի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.39	2.445
ԵՎՐՈ	2.656	2.768
ՌՈՒԲԼԻ	0.04	0.047
ԴՐԱՄ	0.0038	0.0054

Մայիսի 26-ի համեմատ, դոլարի կուրսը ավելացել է 0.005 լարիով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԸ ԿՊԱՐՏԱԴՐՎԵՆ ԲՈՒԺԵԼ ԱՌԱՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

Վրաստանի խորհրդարանի առողջապահության եւ սոցիալական հարցերով կոմիտեն, առաջին ընթերցմամբ, քննարկեց «Առողջապահության մասին» օրենքի փոփոխությունները, ըստ որի, կյանքին սպառնալիքի դեպքում, հիվանդանոցներին հնարավոր է պարտադրվի անհետաձգելի բժշկական օգնություն ցույց տալը՝ չսպասելով ֆինանսավորման մասին ապահովագրական ընկերությունների որոշմանը:

Վերոնշյալ փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ 2017 թվականի մայիսից Վրաստանի քաղաքացիների որոշակի հատվածը, որն օգտվում է մասնավոր ապահովագրությունից, զրկվել է զուգահեռ պետական բժշկական ապահովագրությունից:

Ինչպես պարզաբանեց փոփոխության համահեղինակ, պատգամավոր Սոփիո Կիլաձեն, մասնավոր ապահովագրություն ունեցող հիվանդը կարող է հայտնվել անօգնական վիճակում, եթե նա ստանա վնասվածք, ու դեռեւս չի ապացուցվել նրա անմեղությունը:

- Մեղավորության ապացույցը կարող է ձգձգվել շաբաթներ ու ամիսներ, եւ մասնավոր ապահովագրական ընկերությունը չվճարի բուժման համար: Հնարավորություն կա, որ բժշկական հաստատությունը, ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով, հրաժարվի ընդունել տուժյալին,- նշեց Սոփիո Կիլաձեն:

Միաժամանակ, փոփոխություն է կատարվելու նաեւ Վրաստանի քրեական օրենսգրքում, ըստ որի, եթե հիվանդանոցը տուժածին օգնություն չցուցաբերի, ապա հաստատությանը սպառնում է փակում կամ գործունեության իրավունքի չեղարկում ու տուգանք:

ՏՈՒԳԱՆՎԵԼ ԵՆ ԱՂԲԸ ՓՈՂՈՑՈՒՄ ԹԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Արդեն մեկ ամիս է, ինչ «Թբիլսերվիսգրուպ»-ի տեսուչները, Թբիլիսիի փողոցներում շրջակա միջավայրի աղտոտման համար, տուգանում են քաղաքացիներին:

Անցած ժամանակահատվածում, ձեւակերպվել է 411 տուգանային արձանագրություն, որոնցից 300-ով դուրս են գրվել տուգանքներ 2 կիլոգրամից ավելի կենցաղային աղբը փողոցում թափելու համար: Տուգանքների ընդհանուր գումարը գերազանցել է 42 հազար լարին:

Հատկանշական է, որ տուգանվածներից 151-ը օտարերկրյա քաղաքացիներ են:

Հիշեցնենք, որ ապրիլի 3-ից մայրաքաղաքի փողոցներում հայտնվել են «Թբիլսերվիսգրուպ»-ի հետիոտն տեսուչներ: Առաջին երկու շաբաթների ընթացքում նրանց շրջայցը կրում էր տեղեկատվական բնույթ, նրանք քաղաքացիներին զգուշացնում էին առաջիկա պատժամիջոցների մասին: Տուգանքների մասին արձանագրությունները տեսուչները սկսեցին ձեւակերպել ապրիլի 20-ից:



Հիշեցնենք, որ, երկու կիլոգրամից ավելի կենցաղային աղբ փողոցում թափելու դեպքում, նախատեսվում է 80 լարիի տուգանք:

ԿՐԹԱԿԱՆ

ԱՏԵՍՏԱՑԻՈՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԳԵԼԱԳԻԾԸ ԿԲԱՐՁՐԱՑՎԻ

11 ՀԱԶԱՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ՉԻ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԱՐԳԵԼԱԳԻԾԸ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը առաջիկայում ծրագրում է դպրոցի շրջանավարտների համար բարձրացնել ատեստացիոն քննությունների անցումային արգելագիծը: Այդ մասին հայտարարել է փոխվարչապետ, կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան: Նրա խոսքով, անցումային արգելագիծը հնարավոր է բարձրացվի նաեւ Միասնական ազգային ընդունելության քննությունների ժամանակ:

- Առաջիկայում մենք ծրագրում ենք բարձրացնել արգելագիծը: Գերմանիայում 12-րդ դասարանն ավարտելու ատեստատ ստանում է աշակերտների 30 տոկոսը, իսկ մեզ մոտ՝ 80 տոկոսը: Չեմ կարծում, որ մենք եռակի գերազանցում ենք գերմանացիներին: Բանն այն է, որ 12-րդ դասարանի ավարտական ատեստատը եւ բարձրագույն կրթությունը առավել շարժառիթային եւ առավել միտումնավորված աշակերտների համար է: Եթե դուք տեսնեիք քննությունների առաջադրանքները, ապա կհամոզվեիք, որ մի քիչ սովորելու եւ մի փոքր ցանկություն ունենալու դեպքում, ապա՝ ոչ թե 12, այլ մեկ տարվա ընթացքում կարելի է հաղթահարել այդ արգելագիծը: Ուրախալի է այն, որ այդ 11 հազար աշակերտների համար, ըստ իս, գոյություն ունի արժանավոր կյանքի եւ զբաղվածության համար առավել կարճ ուղի՝ դա մասնագիտական կրթությունն է: Այս տարվա արդյունքները գրեթե նույնն են, ինչ անցյալ տարի, այսինքն՝ վատթարացում կամ բարելավում չի եղել: Առաջիկայում, կարծում եմ, որ ատեստացիոն եւ ընդունելության քննությունների արգելագիծը, ինչպես եվրոպական երկրներում, պետք է առավել բարձր լինի,- հայտարարեց նախարարը:

Նրա խոսքով, այս տարի դպրոցի ավարտական քննությունների շուրջ 50 հազար աշակերտներից 11 հազարը չի կարողացել հաղթահարել նվազագույն արգելագիծը:

- Մոտ 11 հազար աշակերտ կտրվեց դպրոցական ավարտական քննություններից: Տեխնիկական առարկաների հարցում աշակերտները առավել բարդությունների առջեւ կանգնեցին, քան՝ հումանիտար: Բողոքներ ներկայացվեցին, որ քննական առաջադրանքները չէին համապատասխանում ուսումնական ծրագրերին, թեպետ, դա այդպես չէ: Համակարգչային համապատասխան քննությունը նախատեսում է հենց այն, որ առաջադրանքները չափորոշային են եւ համապատասխանում են ուսումնական ծրագրին,- ընդգծեց Ալեքսանդր Ջեջելավան:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԱՐԴԱՏՈՆ - 2017

ԹԲԻԼԻՍԻՆ 103-ՐԴ ԱՆԳԱՄ ՄԵԾԱՐԵՑ ՍԻՐՈ ԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԳՉԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ահել-ջահելի, տարբեր ազգերի զավակների: Բեմին պատվավոր հյուրերն են՝ գրողների պատվիրակությունը, հայ ու վրացի մտավորականներ, պատգամավորներ...

Սկսվում է պաշտոնական մասը: Ելույթ ունեցողները խոսում են Սայաթ-Նովայի ստեղծագործության ազգային ու համամարդկային գաղափարների մասին, նորից ու նորից հիշեցնում Սայաթ-Նովա հանճարի աշխարհին հղված բարոյական ուղերձները:

Բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը ընդգծեց, որ Սայաթ-Նովան մեր մեծ ուրախության եւ, ավա՜ղ, նաեւ մեծ տխրության արտահայտիչն է: Նրա ստեղծագործությունը հենց մարդու կեցության, աշխարհում նրա գոյության խորհուրդն է ամփոփում:

Վրաստանի գրողների միության համանախագահ, բանաստեղծ Մաղվալա Գոնաշվիլին, դիմելով հավաքվածներին, ասաց.

- Սիրելի հայրենակիցներ, մեր համատեղ այս տոնախմբությունը մեր բարեկամության հերթական էջն է արձանագրում: Նոր օղակներով է ամրապնդում նաեւ

հայ ու վրացի գրողներիս բարեկամությունը:

Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը իր ելույթն ավարտեց հետեւյալ խոսքերով.

- Սիրո խորհրդանիշ վարդը այսօր դնելով նրա գերեզմանին՝ մենք վարդի պես բացում ենք մեր սիրտը՝ ի սեր բարեկամության, ի սեր գեղեցկության:

«Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը դիմեց քաղաքապետարանին՝ Թբիլիսիի այս հինավուրց թաղամասում, ուր ապրել ու ստեղծագործել է Մեծն գուսանը, եւ ում անունը այսօր էլ հիշատակվում է վրաց բանաստեղծների ու երգահանների ստեղծագործություններում, մի գողտրիկ հրապարակ կոչել Սայաթ-Նովայի անունով:

Վրաստանի գրողների «Վերնատուն» միության նախագահ Գեւորգ Սնխչյանը ներկաներին ընթերցեց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի ուղերձը տոնահանդեսի մասնակիցներին:

Թբիլիսիի «Ռուսթավելի» ընկերության նախագահ Դավիթ Շեմոքմեդելին ասաց. «Մենք մեծ սիրով ողջունում ենք վրաց հողում ստեղծագործող հայ մեծ գրչության մեծագույն ստեղծագործողին: Մեր բարեկամությունը այսօր չի սկսվել: Այս բարեկամությունն սկսեցին Հովհաննես Թումանյանը, Ակակի Ծերեթելին, եւ նրա ակունքներին կանգնած էին մեր նախահայրերը»:

Սայաթ-Նովայի արվեստի գնահատանքով հանդես եկավ Հայաստանից ժամանած բանաստեղծ Նազելի Նաիրին: Ներկաներին ողջունեց «Վրացահայերի միություն» ծրագրերի ղեկավար Մարի Առաքելովան:

Վարդատոնին ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Դավիթ Ճիճինաձեն, Ռուսլան Պողոսյանը, Վրաստանում Հայաստանի դեսպանության առաջին քարտուղար Արթուր Սարգսյանը, Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանի տեղակալներ Կոբա Չոպլիանին ու Բելլա Օսիպովան, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, Վրաստանի կրթության նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը, «Բազմազգ Վրաստան» հասարակական կազմակերպության նախագահ Առնոլդ Ստեփանյանը, ուրիշներ:

Տոնախմբության համերգային ծրագրի ամենասպասված պահը ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Թովմաս Պողոսյանի ղեկավարությամբ՝ Հայաստանի Հանրային ռադիոյի «Սայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր համույթի ելույթն էր: Համերգին մասնակցեցին լիբանանահայ երգչուհի՝ հատուկ այդ օրվա համար Թբիլիսի ժամանած Կարմեն Աճեմյանը, «Քսովրելեբի» վրացական համույթի ղեկավար էլդար Շոշիկաշվիլին, փոքրիկ մենակատար Միշո Չխեիձեն, Պաատա Թեդիաշվիլին: Ասմունքով հանդես եկան Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի վաստակավոր արտիստ Ռոբերտ Հովհաննիսյանը, արտիստներ Ռոբերտ Աղաջանյանը, Սամվել Էլբակյանը: Համերգին մասնակցեցին նաեւ երգչուհի Նինա Կարապետյանը, Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի դերասաններ Հենրիխ Պետրոսյանը, Դիանա Մարգարյանը, «Վանք» (գեղ.ղեկ.՝ Լիանա Կաշավանիձե), «Անի» (գեղ.ղեկ.՝ Անգելինա Նազարյան-Քոչյան) պարախմբերը:

Միջոցառումը կազմակերպել էր «Վրացահայերի միությունը»՝ Թբիլիսիի քաղաքապետարանի, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի, Վրաստանի ու Հայաստանի մշակույթի նախարարությունների, Վրաստանում Հայաստանի դեսպանության աջակցությամբ:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԴԻՄԱՆԿԱՐ

ԳԻՈՐԳԻ ՄԱՆՈՅԱՆԻ ԳՈՒՅՆԵՐԻ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Թբիլիսիի բոլոր հին թաղամասերում ամենուր է հայկական հետքը, սակայն հայկական կոլորիտը առավել տարածված է Քռի աջ եւ ձախ ափերի հինավուրց թաղամասերում, եւ, իհարկե, Հավլաբարում, որ կարծես վախով կանգ է առել գետի ուղղաձիգ ափերին: Այդ թաղամասն ունի իր աշխարհը, իր երաժշտությունն ու իր երկիրը: Եվ, իհարկե, իր մարդկանց՝ ծնված ու մեծացած թաղամասի ոչ շատ ժամանակի հետքերը կրող շենքերում, հայկական եկեղեցիները, փոքրիկ դուքաններն ու հին շուկան, որտեղ միշտ հնարավոր էր գնել մեկուսիչ կապույտ ժապավենով փաթաթած Բաքվի սեւ խավիարի բանկան: Այստեղ՝ ծխի եւ տոլմայի բուրմունքն իր մեջ ներառած պատերի ներքո, ապրում է զարմանալի նկարիչը, որի ողջ կյանքը կապված է Հավլաբարի հետ: Նրա անունն է Գիորգի Մանոյան:

Ես նրա մոտ հյուրընկալվեցի ցուրտ եւ անձրեւային մայիսյան մի օր, երբ տրամադրությունը թելադրվում է շրջապատի անբարեհաճ եղանակով, եւ հայտնվեցի նկարչի կողմից ստեղծած ներկերի կախարդական աշխարհում: Նկարներով են զարդարված Մանոյանների այս տոհմական գույնի բոլոր պատերը, չէ՞ որ այդ բնակարանում էին ծնվել նաեւ նկարչի ծնողները, տատերն ու ապուպապերը, ովքեր բնիկ թբիլիսցիներ են:

Գիորգի Մանոյանը ստեղծագործական լայն մտահորիզոնով նկարիչ է: Նա գործում է տարբեր ժանրերով, նրա ստեղծագործություններում տեղ են գտել ինչպես բնանկարները, այնպես էլ՝ նատյուրմորտներն ու դիմանկարները, միաժամանակ, նա օգտագործում է տեխնիկական տարբեր մեթոդներ, օգտվում տարբեր նյութերից, օրինակ, յուղաներկից, տուշից, գունամատիտներից ու նաեւ գրաֆիտից: Նա մոտ է ավանդական ակադեմիական դպրոցին, սակայն զգացել է հայկական տարբերակով իմպրեսիոնիզմի ազդեցությունը: Իր բնանկարներում, ինչպես նաեւ մյուս գործերում Մանոյանը խստորեն հետեւում է գեղանկարչության մեջ ձեւավորված օրենքին, կոմպոզիցիային, լուսաեթերային հեռանկարին՝ դրան ավելացնելով տեղի ունեցածի անձնական զգացումները:

Յուղաներկով կտավները, որոնց վերջին տարիներին միտված է Մանոյանը, տարբերվում են հարավային երկրներում հաճախակի հանդիպող խայտաբղետ ներկապնակով, որը թելադրված է ջերմ արեւով ու հարուստ բնությամբ: Այդ փայլատակող բազմերանգությունը գերակայում է բուսաբանական այգու եւ Խոջիվանքի բնանկարներում՝ թեթեւակի քամուց շարժվող կիպարիսներով, սոճիների զարմանալի բներով, արեւի ճառագայթներով ողողված դաշտերով:

Նկարիչը շատ է աշխատում նաեւ գունամատիտներով՝ հիմնականում ստեղծելով դիմանկարներ ու նատյուրմորտներ, որոնցում գիտակցաբար օգտագործում է մուգ, մեծ մասամբ կեսգիշերային կապույտ ֆոնը, ձգտում է մրգերը պահպանել պայծառ ու հյութալի, իսկ ծաղիկները՝ նուրբ եւ բնական:

Մանոյանի վրձնին պատկանող դիմանկարների թվում, որոնք կատարվել են ոչ միայն գունանկարներով, առանձնակի հաջող են ինքնանկարները, որոնցում հիանալիորեն պատկերված է վարպետի ինչպես կյանքը, այնպես էլ՝ նրա ստեղծագործական ուղին:

Շատ նկարիչների համար արդարացված է այն կարծիքը, որ մատիտով արված էսքիզները կտավների համապատասխան պատկերումներն են, սակայն, այդ աքսիոման չի առնչվում Գիորգի Մանոյանի գծանկարչությանը: Նկարելու ոճն ու ակադեմիական հին պատրաստվածությունը լրիվությամբ բացահայտվում են հենց գծանկարային բնանկարներում, փոքրիկ շտրիխները նկարչին թույլ են տալիս հասնելու հետաքրքիր բացահայտումների, հիմնելու նուրբ, իրատեսական գծանկարներ: Դրանց մեծ մասը կապված է հին քաղաքի նույնքան հին շենքերին ու լքված եկեղեցիներին, որոնք ենթակա են վերացման: Նրա նկարների ողջ շարքը պատմություն է Թբիլիսիի հայկական շրջանի, դրա փայտե պատշգամբների շրջապտույտ սանդուղքների անհետացող տեսարժանության մասին:

Ես դուրս եկա նկարչի հյուրընկալ բնակարանից եւ կրկին հայտնվեցի անձրեւաջրով հեղեղված վրացական մայրաքաղաքի փողոցներում ու այստեղ ընկալեցի, որ Գիորգի Մանոյանին կցանկանայի կոչել Հին Հավլաբարի երգիչ:

ՎԻԿՏՈՐՅԱ ՊԻՐԱԴՈՎԱ

Նկարում,- Նկարիչ Գիորգի Մանոյանը եւ Վիկտորյա Պիրադովան: